ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3
ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.11.2024թ. ժամը 16-30-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Սեդրակյան,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ռաֆայել Դավթյանը, Արամ Միրզոյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

Արտահերթ նիստ
Ա/Ձ Լուսիա Պետրոսյանի կողմից կեղծ փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Հանձնաժողովը արձանագրեց, որ «Լուսիա Պետրոսյան» Ա/Ձ-ն (ՀՎՀՀ 74438549) ս/թ-ի հոկտեմբերի 25-ից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում է և մասնակցել է տվյալ գնման ընթացակարգին:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**: ... »:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Ա/Ձ Լուսիա Պետրոսյանի հայտը մերժել:
2. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Սարգիս Սեդրակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ռաֆայել Դավթյան

_____ Արամ Միրզոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան